



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ**

ք. Զերմուկ

06/մայիսի/2019 թ.

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...8..... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Արմինե Ղազարյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ Ստեփանոս Վարդանյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Արսեն Գառնիկյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ Մարիամ Առաքելյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հայկ Դավթյանը:

Նիստը վարում էր Զերմուկ համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը

Նիստը արձանագրում էր Զերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը:

Լսեցին

ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան

1. Հաստատել Զերմուկ համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 6-ի նիստի հետևյալ *օր ա կ ա ր գ ը*.

1.1. Զերմուկ համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 23-ի N 4-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Զերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ում ծնողների կողմից կատարվող վճարների զեղչ կիրառելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Առաքելյան

